International Council on Monuments and Sites
Conseil International des Monuments et des Sites

ICOMOS / Armenia
32 Hanrapetutyan st. 010 Yerevan
Phone: +374 10 52-35-01 E-mail: icomosarm@gmail.com

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽԱՐՏԻԱ (ՎԵՆԵՏԻԿԻ ԽԱՐՏԻԱ 1964)

Ճարտարապետների և պատմական հուշարձանների տեխնիկական մասնագետների II միջազգային կոնգրես, Վենետիկ, 1964

Ընդունված ԻԿՕՄՕՍ-ի կողմից 1965թ.

Անցյալի հոգևոր արժեքներ կրող պատմական հուշարձանները պահպանվել են մինչև մեր օրերը՝ որպես մարդկության դարավոր ավանդույթների կենդանի վկաներ: Ներկայումս մարդիկ ավելի են գիտակցում հուշարձանների համամարդկային արժեքը՝ դրանց համարելով համընդհանուր ժառանգություն, գիտակցելով դրանց պահպանության միասնական պատասխանատվությունը: Նրանք իրենց պարտքն են համարում այդ հուշարձանները, իրենց իսկության ողջ արժեքով, փոխանցել գալիք սերունդներին:
Էական է այն, որ հնագույն հուշարձանների պահպանման և վերականգնման սկզբունքները սահմանվեն և համաձայնեցվեն միջազգայնորեն ընդունված հիմնադրույթներով, ընդ որում յուրաքանչյուր երկիր ինքն է պատասխանատու իր սեփական մշակույթի և ավանդույթների պահպանության համար:
Առաջին անգամ սահմանելով այս հիմնարար սկզբունքները՝ 1931թ. Աթենքի խարտիան նպաստեց լայնածավալ միջազգային շարժման զարգացմանը, որի հստակ ձևակերպումներն արտացոլվեցին ազգային փաստաթղթերում, ԻԿՕՄ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործունեության մեջ և վերջինիս կողմից «Մշակութային արժեքների պահպանման և վերականգնման միջազգային հետազոտությունների կենտրոնի» ստեղծման գործում: Իրազեկության բարձրացման և քննադատական վերլուծության արդյունքում ներկայումս առաջ են եկել մի շարք բարդ և բազմազան խնդիրներ: Այժմ ժամանակն է նորովի ուսումնասիրել Խարտիայում ներառված սկզբունքները և ընդլայնել դրանց շրջանակը նոր փաստաթղթում:

Այսպիսով, ճարտարապետների և պատմական հուշարձանների վերականգնողների II-րդ միջազգային կոնգրեսը, որը տեղի է ունեցել Վենետիկում 1964 թվականի մայիսի 25-ից մինչև 31-ը, ընդունել է հետևյալ տեքստը.

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Հոդված 1

Պատմական հուշարձան հասկացությունը ներառում է ոչ միայն առանձին ճարտարապետական ստեղծագործություն, այլ նաև քաղաքային կամ գյուղական միջավայր՝ որպես որոշակի քաղաքակրթության նշանակալից զարգացման կամ պատմական որևէ իրադարձության վկայություն: Այն տարածվում է ոչ միայն արվեստի նշանավոր ստեղծագործությունների, այլ նաև ժամանակի ընթացքում մշակութային արժեք ձեռք բերած ավելի համեստ գործերի վրա:

Հոդված 2

Հուշարձանների պահպանության ու վերականգնման գործընթացում պետք է կիրառվեն գիտական և տեխնոլոգիական այն հնարքները, որոնք կարող են նպաստել ճարտարապետական ժառանգության ուսումնասիրմանը և պահպանմանը:

Հոդված 3

Հուշարձանների պահպանության ու վերականգնման նպատակը ոչ միայն դրանց պահպանումն է որպես արվեստի գործ, այլ նաև՝ որպես պատմական վկայություն:

ՊԱՀՊԱՆՈՒՄ

Հոդված 4

Հուշարձանների պահպանության առաջնային խնդիրը մշտական հոգածությունն է դրանց նկատմամբ:

Հոդված 5

Հուշարձանների պահպանությունը մշտապես նպաստում է հասարակության կողմից օգտագործման հնարավորությանը, որը ընդունելի է միայն շենքերի հորինվածքի և հարդարանքի պահպանման պայմանով: Միայն այդ դեպքում է թույլատրելի ձեռնարկել կառույցի գործառույթի փոփոխություն՝ հարմարեցնելով ժամանակակից կյանքի նոր պահանջներին:

Հոդված 6

Հուշարձանի պահպանումը իրականացվում է իր պատմական միջավայրի սահմաններում: Եթե գոյություն ունի ավանդական միջավայր, ապա այն չպետք է խաթարվի: Ցանկացած նոր շինարարություն, փոփոխություն կամ քանդում, որոնք կարող են խաթարել ծավալային և գունային փոխկապակցվածությունը՝ անընդունելի են:

Հոդված 7

Հուշարձանն անբաժանելի է պատմությունից, որի վկան է, և այն միջավայրից, որտեղ գտնվում է: Հուշարձանի ամբողջական կամ մասնակի տեղափոխումն անթույլատրելի է, բացառությամբ այն դեպքերի, երբ դա պահանջում է այդ հուշարձանի

պահպանությունը, կամ երբ դա հիմնավորված է ազգային կամ միջազգային առաջնահերթ շահերով:

Հոդված 8

Հուշարձանի անբաժանելի մաս կազմող քանդակագործական, պատկերագրական կամ դեկորատիվ տարրերը կարող են առանձնացվել միայն այն դեպքում, եթե դա միակ միջոցն է, որը կարող է ապահովել դրանց պահպանումը:

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Հոդված 9

Վերականգնումը խիստ մասնագիտական գործունեություն է: Դրա նպատակը հուշարձանի գեղագիտական և պատմական արժեքների պահպանումն ու բացահայտումն է՝ հիմք ընդունելով բնօրինակ և փաստագրական նյութերը: Վերականգնումը պետք է դադարեցվի այնտեղ, որտեղ սկսվում են ենթադրությունները: Ինչ վերաբերում է առաջարկվող վերականգնմանը, ապա գեղագիտական կամ տեխնիկական նկատառումներով անհրաժեշտ համարվող ցանկացած միջամտություն պետք է տարբերվի բնօրինակի ճարտարապետական հարդարանքից և կրի տվյալ ժամանակի դրոշմը: Հուշարձանի վերականգնման աշխատանքներին մշտապես պետք է նախորդեն և ուղեկցեն հնագիտական և պատմական հետազոտությունները:

Հոդված 10

Այն դեպքում, երբ ավանդական տեխնոլոգիական հնարքները համարվում են անբավարար, ապա հուշարձանի ամրացումը կարող է իրականացվել ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ, որոնց արդյունավետությունն ապացուցված է գիտական հիմնավորումներով և երաշխավորված է փորձով:

Հոդված 11

Հուշարձանի հետագա դարաշրջաններում կրած հավելումները պետք է պահպանվեն, քանի որ ոճի միասնությունը և ոճական ամբողջականությունը վերականգնման նպատակ չի հանդիսանում: Եթե շենքը կրում է բազմաթիվ մշակութային շերտեր, ապա դրանց հեռացումը կարող է իրականացվել այն դեպքում միայն, երբ հեռացվող տարրերը հետաքրքրություն չեն ներկայացնում, երբ բացահայտված մասի հորինվածքը ներկայացնում է պատմական, հնագիտական կամ գեղագիտական բարձր արժեք, և երբ դրա պահպանության վիճակը բավարար է: Նման տարրերի արժևորման մասին դատողությունները և դրանց հնարավոր վերացման մասին որոշումները չեն կարող կախված լինել միայն նախագծի հեղինակից:

Հոդված 12

Հուշարձանի բացակայող հատվածների համար նախատեսված նոր տարրերը ամբողջի մեջ պետք է լրացվեն ներդաշնակորեն և միևնույն ժամանակ տարբերվեն բնօրինակից, որ վերականգնումը չկեղծի հուշարձանի պատմական և գեղարվեստական վավերականությունը:

Հոդված 13

Հուշարձանի լրացումները կարող են թույլատրվել միայն այն դեպքում, եթե դրանք անխաթար են թողնում շենքի բոլոր նշանակալի մասերը, նրա ավանդական տարածքը, հորինվածքի հավասարակշռությունը և շրջակա միջավայրի հետ փոխադարձ կապը:

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐ

Հոդված 14

Հուշարձանային համալիրները ենթակա են հատուկ հոգածության, որն անհրաժեշտ է դրանց ամբողջականության պահպանության, բարեկարգման, հարմարեցման ու օգտագործման բարելավումն ապահովելու համար: Պահպանման և վերականգնման աշխատանքները պետք է պայմանավորված լինեն վերը նշված սկզբունքներով:

ՊԵՂՈՒՄՆԵՐ

Հոդված 15

Պեղումները պետք է իրականացվեն գիտական չափանիշներին համապատասխան և 1956 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունված «Հնագիտական պեղումների անցկացման միջազգային սկզբունքները սահմանող հանձնարարականների» համաձայն:

Պետք է ապահովվեն ավերակների ամրացումները և միջոցներ ձեռնարկվեն պեղումների ընթացքում հայտնաբերված ճարտարապետական տարրերի և առարկաների պահպանման և մշտական պաշտպանության համար: Բացի այդ, պետք է ձեռնարկվեն հատուկ միջոցներ հուշարձանը լիարժեք բացահայտելու և ճիշտ պատկերացում կազմելու համար՝ չխեղաթյուրելով դրա իմաստը:

Որևէ վերակառուցում ի սկզբանե պետք է բացառել: Կարելի է թույլատրել միայն անաստիլոսը, այսինքն՝ պահպանված, բայց ցրված բեկորների վերադարձը իրենց տեղերը: Ներմուծված նոր տարրերը միշտ պետք է ճանաչելի լինեն և ներկայացնեն այն նվազագույնը, որն անհրաժեշտ է հուշարձանի պահպանության պայմանների ապահովման և նրա ձևերի միասնության վերականգնման համար:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Հոդված 16

Պահպանման, վերականգնման և պեղումների բոլոր աշխատանքները մշտապես պետք է ուղեկցվեն ճշգրիտ փաստաթղթավորմամբ՝ ներկայացված վերլուծական և փորձաքննական հաշվետվությունների տեսքով՝ նկարազարդված գծագրերով և լուսանկարներով: Դրանք պետք է արտացոլեն մաքրման, ամրակայման, վերակազմավորման և ինտեգրման աշխատանքների բոլոր փուլերը, ինչպես նաև այդ աշխատանքների ընթացքում բացահայտված տեխնիկական և ֆորմալ բնույթի առանձնահատկությունները: Տվյալ փաթեթը պետք է փոխանցվի հանրային կազմակերպությունների արխիվներ և հասանելի լինեն հետազոտողներին: Խորհուրդ է տրվում այդ հաշվետվությունը հրապարակել:

Հուշարձանների պահպանման և վերականգնման միջազգային խարտիայի կազմման հանձնաժողովի աշխատանքներին մասնակցել են.

Պիերո Գացոլա (Իտալիա), նախագահ
Ռայմոնդ Լեմեր (Բելգիա), զեկուցող
Խոսե Բասեգոդա-Նոնել (Իսպանիա)
Լուիս Բենավենտե (Պորտուգալիա)
Ջորջե Բոսկովիչ (Հարավսլավիա)
Հիրոշի Դայֆուկու (ՅՈՒՆԵՍԿՕ)
Պիետեր դե Վրիեզե (Նիդեռլանդներ)
Հարալդ Լանգբերգ (Դանիա)
Մարիո Մատեուչի (Իտալիա)
Ժան Մերլե (Ֆրանսիա)
Կառլոս Ֆլորես Մարինի (Մեքսիկա)
Ռոբերտո Պանե (Իտալիա)
Յակուբ Պավել (Չեխոսլովակիա)
Փոլ Ֆիլիպոտ (ԻՔՔՌՕՄ)
Վիկտոր Պիմենտել (Պերու)
Հարոլդ Պլանդերլեյթ (ԻՔՔՌՕՄ)
Դեոկլեցիո Ռեդիգ դե Կամպոս (Վատիկան)
Ժան Սոնիեր (Ֆրանսիա)
Ֆրանսուա Սորլին (Ֆրանսիա)
Եվստաթիոս Ստիկաս (Հունաստան)
Գերտրուդ Թրիփ (Ավստրիա)
Յան Զավատովիչ (Լեհաստան)
Մուստաֆա Զբիս (Թունիս)